ՎԵՀԱՐԱՆՈՒՄ



ՄՏԱՎՈՐԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՎԵՀԱՐԱՆՈՒՄ

1991 թ. մարտի 20-ին, չորեքշաբթի օրը, երեկոյան, Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Վեհարանում տեղի ունեցավ Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Վազգեն Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի հանդիպումը հայրենի մտավորականության ներկայացուցիչների հետ:

Հանդիպմանը ներկա էին հյուրաբար Մայր Աթոռում գտնվող Երուսաղեմի հայոց Պատրիարք Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը, ԱՄՆ-ի հայոց արևմտյան թեմի առաջնորդ Տ. Վաչե արքեպիսկոպոս Հովսեփյանը, Տ. Շահե արքեպիսկոպոս Աճեմյանը, ԱՄՆ-ի հայոց արևելյան թեմի առաջնորդ Տ. Խաժակ եպիսկոպոս Պարսամյանը, Կանադայի հայոց թեմի առաջնորդ Տ. Հովնան եպիսկոպոս Տերտերյանը, Մարսելի հայոց հոգևոր հովիվ Տ. Գարեգին ծայրագույն վարդապետ Պեքճյանը, Ժնևի հայոց հոգևոր հովիվ Տ. Վիգեն ծայրագույն վարդապետ Այքազյանը, ինչպես նաև ներքին թեմերի թեմակալ առաջնորդներն ու Սուրբ Էջմիածնի Մայրավանքի միաբանության անդամները:

Հանդիպմանը հրավիրված էին Հայաստանի Հանրապետության Նախարարաց խորհրդին առընթեր Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Լյուդվիգ Խաչատչյանը, Գերագույն Հոգևոր Խորհրդի անդամները և հայրենի մտավորականության շուրջ 60 ներկայացուցիչներ, գրողներ, արվեստագետներ, մշակույթի, գիտության տարբեր բնագավառների անվանի գործիչներ, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության խորհրդարանի մի շարք անդամներ:

Հավաքույթի ատենավարն էր Մայր Աթոռի դիվանապետ Տ. Ներսես արքեպիսկոպոս Պոզապալյանը:

Ողջույնի հակիրճ խոսքով հավաքույթը բաց արեց Ամենապատիվ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանը:

Այնուհետև հանգամանալից զեկուցումով հանդես եկավ Ամենայն Հայոց Հայրապետը՝ կանգ առնելով հետևյալ երեք հարցերի վրա.

ա. Քրիստոնեական կրոնի այժմեականությունը հայ ժողովրդի կյանքում.

բ. Հայ Եկեղեցին և հայ ազատագրական շարժումը:

գ. Հայ Եկեղեցու կրոնական, բարոյական, կրթական ու հայրենասիրական առաքելությունը մեր օրերին:

Ապա, հանուն Հայաստանի Հանրապետության պետական իշխանության, օրվա հանդիսությունը ողջունեց Հայ Եկեղեցու գործերի խորհրդի նախագահ տիար Լյուդվիգ Խաչատրյանը:

Հանդիպման ընթացքում խոսք առան հայրենի մտավորականության 17 ներկայացուցիչներ, որոնք իրենց ելույթներում շոշափեցին այժմեական որոշ հարցեր, ինչպես Հայ Եկեղեցու և կրոնական դաստիարակության դերը այսօր հայրենաբնակ մեր ժողովրդի կյանքում, կրոնական-բարոյական բնույթի գրքերի, թերթերի հրատարակում, հոգևոր թեմաներով հաղորդումների հաճախակի կազմակերպում ռադիոյով և հեռուստատեսությամբ, սերտ համագործակցություն հանրապետության գիտական և մշակութային հաստատությունների և Մայր Աթոռի միջև և այլն: Այս կապակցությամբ եղան գործնական մի շարք առաջարկություններ:

Խորհրդակցական սույն հանդիպումը ավարտվեց Նորին Սրբության եզրափակիչ խոսքով, նրա օրհնությամբ և խմբովին արտասանված «Հայր մեր»-ով:

ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ

Ս. Էջմիածին,
26 մարտի 1991 թ.